

98. ՀԸԹԸՐՔԵՑՈՒՑ ՆԱՂԼԸ

Մին քանի հըթըրքեցն քյինամ ըն փադուս Տահանց մին մարթ ա ջիհում։ Էտ մարթին ծեն ըն տամ, ասում.—Ինք տես մըեր կացեններան գոնրն ա սոր։ Էտ մարթը տահանց կացեն-նեն մին-մին յոր ա օնում, փորցում, ասում.—Էս մինը սոր ա։ Մինգյել էն մինն ա յոր օնում, ասում.—Էս էլ ա սոր։ Իսի ընելավ կացեննեն լոխ յոր ա օնում տինում ծիյին թարքյին, ծին չափ տամ, քշում, փախնում։

Հըրթըրքեցնեքյ էտ ծիյին քոռակը փոնում ըն, կյիցըրներեն շորերը հանում յիրա տամ, վըեր քոռակը տակեն ըստակեն։ Էտ քոռակն էլ շորերը յոր ա օնում, փախնում, քյինամ մորը հետան հըանում։ Սահանք թա՝ էս քոռակը խե՞ պիտի կարե փախնի, շու-ըրըններս լոխ յիրա յընք տուվալ։ Մինգյել նշում ըն, տըեսնում գերն ուրան շորերը լոխ հանած, մեննակ շալվարը կյեցը։ Ասում ըն.—Հինչու ըրալ ա, լոխ գերն ա ըրալ, վըեր շալվարը հանած ինամ քցած քուռակեն յիրա, կարալ չար փախնի։ Համ ասում ըն, համ փոնում գերին էնքան թակում, վըեր մըեռնում ա։